# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<<17>> դեկտեմբերի 2020թ.  N ՄՊ/478 - 2020

ք. Արմավիր

### ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԵՎ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾԱԾ ՕՐԵՐԸ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 9-րդ, 27-րդ կետերով հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնի անձնագիրը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի դիմումը.

**Ո ր ո շ ու մ ե մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին տրամադրել 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մասը՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ից 2021 թվականի հունվարի 20-ը ներառյալ՝ 10 աշխատանքային, 5 տոնական և 1 հիշատակի օր տևողությամբ:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քարտուղարության պետ Դավիթ Դավթյանին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր ֆինանսիստի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վարազդատ Մկրտչյանին:
4. Արամ Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի հունվարի 21-ից:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանի 2019-2020 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործած մասը՝ 14 աշխատանքային օր տևողությամբ տեղափոխել և տրամադրել նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 17.12.2020 17:02:01 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230